

Իմ Կալիֆորնիայի համայնքը գործիքը

Ամեն տասը տարին մեկ, ԱՄՆ մարդահամարից հետո, Կալիֆորնիան պետք է վերագծի իր Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Հավասարեցման պետական խորհրդի շրջանների սահմանները՝ արտացոլելու համար բնակչության Նոր տվյալները: Քվեարկողները ՆԱԽ օրենքը (Voters FIRST Act) (2008 թ.) այս իշխանությունը տվեց Կալիֆորնիայի ժողովրդին՝ ստեղծելով Կալիֆորնիայի շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողով (California Citizens Redistricting Commission) (Հանձնաժողով): Հանձնաժողովը հանձն է առել գծել արդար շրջաններ, որոնք արտացոլում են ժողովրդի և ոչ թե պաշտոնավարող պետական գործիչների լավագույն շահերը:

Քայց սա անելու համար մեզ ձե՛ր ներդրումն է պետք: Այս փաստաթղթի միջոցով, Հանձնաժողովը իմանում է ձեր համայնքի մասին՝ Հանձնաժողովին հայտնելով, թե ինչն է կարևոր ձեզ համար, գծելով ձեր համայնքի քարտեզը, և ուղղակի Հանձնաժողովին ներկայացնելով ձեր համայնքի արձագանքը: Կարող եք նաև այս թղթյա փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել DrawMyCACommunity.org կայքում: Կալիֆորնիայում բնակվող ամեն անձ հրավիրվում է մասնակցել: Փոստային ծախսերը վճարվել են Հանձնաժողովի կողմից՝ մասնակցությունը մեծացնելու համար: Մենք անհամբեր սպասում ենք լսել ձեզանից:

Մասնակցե՛ք 3 հեշտ քայլերով

		
<p style="text-align: center;">#1</p> <p style="text-align: center;">ՆԿԱՐԱԳՐԵՔ ձեր համայնքը</p>	<p style="text-align: center;">#2</p> <p style="text-align: center;">ԳԾԵՔ ձեր համայնքը քարտեզի վրա</p>	<p style="text-align: center;">#3</p> <p style="text-align: center;">ՈՐԱՐԿԵՔ ձեր վկայությունն ուղղակի Հանձնաժողովին</p>

ՕՐԻՆԱԿ #1

Ես բնակվում եմ Ագարակապանների բաժանմունքի մի եզակի տարածքում, որը կոչվում է Oak Knoll Valley: Թաղամասի սահմաններն են արևմուտքից 9-րդ մայրուղին և արևելքից Sunnyside River-ը: Այն հիմնականում բնակելի տարածք է՝ որոշ տարածքներով, որոնք զոտիավորված են առևտրային և խառը օգտագործման համար, հատկապես գետի երկայնքով: Oak Knoll Valley-ում խոսվող լեզուները հիմնականում անգլերենն ու իսպաներեն են, վիետնամերեն և մանդարին խոսող մի շարք բնակիչների հետ: Oak Knoll Valley-ի գետից այն կողմ գտնվում է River Glen-ի համայնքը, որը նման է մեր համայնքին, քանի որ բնակելի է հիմնականում: Մենք գտնվում ենք նույն դպրոցական շրջանում և Oak Knoll-ի ուսանողների հաճախած բարձր դպրոցը գտնվում է River Glen-ում: Տրամաբանական կլիներ, որ մենք ընդգրկվեինք նույն օրենսդրական կամ Կոնգրեսական շրջանում:

ՕՐԻՆԱԿ #2

Ես բնակվում եմ Bear City-ում՝ 9-րդ մայրուղու և 5-րդ միջնահանգային մայրուղու հարևանությամբ արդյունաբերական և առևտրային մի տարածք: Մեր համայնքը անցնում է Maple Street-ից դեպի Oak Street և Green Drive-ից և Fork Road-ից: Բնակիչների մեծ մասն ապրում է բազմընտանիք բնակարանային շենքերում, և նրանցից շատերը նորեկ են այդ տարածքում: Bear City-ն ունի իր սեփական դպրոցական շրջանը և բնակիչների մեծ մասը անգլերեն է խոսում: Մեր համայնքը չպետք է ընդգրկվի River City-ում, որը գտնվում է 5-րդ միջնահանգային մայրուղու մյուս կողմում: River City-ն բաղկացած է մեկ ընտանիքանոց տներից և նրանց կարիքները շատ տարբեր են մեր կարիքներից:

Քարտեզների պետք է մեզ տրամադրեն բավարար տեղեկություն՝ փողոցներ, մայրուղիներ կամ համայնքի սահմանների հանդիսացող բնական առանձնահատկություններ, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որտեղ է գտնվում ձեր շահագրգիռ համայնքը: Նրանք դրանից դուրս ոչ մի մանրամասնություն չեն պահանջում: